

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԳՄԿ գիտական խորհրդի

<< 10 >> հոկտեմբեր 2018թ. Թիվ 135 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԳՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան



ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՀԱՐՑՄԱՆ

Երևան 2018

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման (այսուհետ՝ ուսանողական հարցման) կարգը սահմանում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը:

1.2 Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԳԿՄԿ կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ԳԿՄԿ ուսանողների՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և կենտրոնի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3 Ուսանողական հարցման կարգը հաստատում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհուրդը:

1.4 Ուսանողական հարցման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժինը:

2. Ուսանողական հարցման անցկացում

2.1 Ուսանողական հարցումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում:

2.2 Ուսանողական հարցումն անցկացվում ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կողմից սույն կարգին կից հարցաթերթով (Հավելված 1):

2.3 Ուսանողական հարցումն անանուն է:

2.4 Ուսանողական հարցումն անցկացվում է ամբիոնների կողմից նախապես ներկայացված ժամանակացույցի համաձայն՝ դասաժամերին, խմբի ուսանողների առնվազն 51%-ի մասնակցության պայմաններում:

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակում և պահպանում

3.1 Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են Կրթության որակի համապատասխան մասնագետի կողմից:

3.2 Ուսանողական հարցման արդյունքները պահպանվում են Կրթության որակի ապահովման բաժնում:

4. Ուսանողական հարցման արդյունքների կիրառումը

4.1 Ուսանողական հարցման արդյունքները ՈԱ բաժինը ներկայացնում է տնօրինությանը, անհրաժեշտության դեպքում նաև այլ ստորաբաժանումներ (ղեկանատ, ուսումնական մաս):

4.2 Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ստորաբաժանումներում;

4.3 Մշակվում է կրթական կարիքների բարելավմանն ուղղված համապատասխան գործողությունների պլան:

ԳԿՄԿ մագիստրոսների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված հարցում

Հարգելի ուսանող,

Խնդրում ենք մասնակցել կրթական կարիքների բացահայտմանն ուղղված հարցմանը: Ձեր անկեղծ պատասխանները կօգնեն ճիշտ գնահատել կրթական կարիքները և կնպաստեն դրանց բարելավման գործընթացին ԳԿՄԿ-ում: Ակնկալում ենք Ձեր անկեղծ պատասխանները և աջակցությունը:

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Սեռը 1.Արական _____ 2.Բզական _____

Մասնագիտությունը -----

1.Ամբիոնների կողմից քննական (ստուգարքային) հարցաշարերը տրվում են ժամանակին:

Տրվում են ժամանակին	Լինում են ուշացումներ	Չեն տրվում ժամանակին	Դժվարանում են պատասխանել
---------------------	-----------------------	----------------------	--------------------------

2.Ամբիոնների կողմից մագիստրոսական թեզի թեմաները և առաջադրանքները տրվում են ժամանակին:

Տրվում են ժամանակին	Լինում են ուշացումներ	Չեն տրվում ժամանակին	Դժվարանում են պատասխանել
---------------------	-----------------------	----------------------	--------------------------

3.Ուսանողներն ապահովված են բավարար մեթոդական նյութերով (դասագիրք, էլ. դասախոսություն, մեթոդական ցուցումներ, առարկայի հարցաշարեր և այլ նյութեր):

Բավարար	Մասամբ բավարար	Ոչ բավարար	Դժնարանում են պատասխանել
---------	----------------	------------	--------------------------

4.Ձեր գոհունակությունը գիտական ղեկավարի հետ կատարած աշխատանքից:

Շատ գոհ եմ	Գոհ եմ	Այդքան էլ գոհ չեմ	Գոհ չեմ	Դժվարանում են պատասխանել
------------	--------	-------------------	---------	--------------------------

5.Գնահատեք ԳԿՄԿ կրթական գործընթացի կազմակերպման տարածքային, գույքային, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունները:

	Շատ գոհ եմ	Գոհ եմ	Այդքան էլ գոհ չեմ	Գոհ չեմ	Դժվարանում են պատասխանել
Ժամանակակից տեխնիկական միջոցներով լսարանային հագեցվածություն					
Ընթերցասրահների՝ տեխնիկական և տեղեկատվական միջոցներով հագեցվածություն					
Գիտական լաբորատորիաների տեխնիկական հագեցվածություն					
Էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների օգտագործման թույլտվություն					

Ուսումնական, մեթոդական և գիտական գրականության հասանելիություն					
Անհրաժեշտ ուսումնական և գիտական գրականության վերաբերյալ ուղղորդումներ					

6. Գանահատեք Կենտրոնի կողմից տրամադրված հետևյալ գիտելիքների մակարդակը:

	Շատ բարձր	Բարձր	Միջին	Ցածր	Դժվարանում եմ պատասխանել
Օտար լեզուներ					
Համակարգչային ծրագրեր					

7. Ձեր մասնակցությունը Կենտրոնի գիտական կյանքին:

	Կենտրոնում	Կենտրոնից դուրս
Գիտական կոնֆերանսներ		
Քննարկումներ		
Ուսանողական աշխատանքների մրցույթներ		
Ամբիոնների գիտական աշխատանքներում ընդգրկվածություն		
Բազային գիտահետազոտական լաբորատորիայի աշխատանքներում ընդգրկվածություն		

8. Արդյո՞ք տեղյակ եք Կենտրոնի ուսանողական խորհրդի աշխատանքներին, եթե այո, ապա ինչպե՞ս եք այն գնահատում:

ա/ այո _____ բ/ ոչ _____

Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Դժվարանում եմ պատասխանել

9. Արդյո՞ք ծանոթ եք Շրջանավարտների հետ կապի և կարիերայի կենտրոնի գործունեությանը, եթե այո, ապա ինչպե՞ս եք այն գնահատում:

ա/ այո _____ բ/ ոչ _____

Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Դժվարանում եմ պատասխանել

10. Լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ
